ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1403-Ա

« 27» օգոստոսի 2024թ. ք. Էջմիածին

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, ուսումնասիրելով ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 24/13 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի «26» օգոստոսի 2024թվականին կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-ով ընդունված որոշմամբ «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Գնահատող հանձնաժողովի ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 24/13 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովը Պատվիրատուի ղեկավարին է ներկայացրել «26» օգոստոսի 2024 թ. կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-ը, որով հայտնել է հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 19-ին հայտարարված ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 24/13 ծածկագրով գնման Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, քանի որ «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ն փոխկապակցված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ՏԱՐՈՆ-ԳԳ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05028219)՝ հիմք՝ Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակ, հրապարակված «26» օգոստոսի 2024 թ.:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, Գնահատող հանձնաժողովը «26» օգոստոսի 2024 թ. որոշում է ընդունել «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և

մերժել, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով, առաջարկել Պատվիրատուի ղեկավարին դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով և նույն հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասին 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 24/13 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հիմքերը՝ «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող,
Առաջին տեղակալի
2024 թվականի օգոստոսի 27-ի
Թիվ 1403-Ա որոշման

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՏԵԽ. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1» ՍՊԸ	04438751	ք. Երևան, Դավթաշեն 1 թղմ., 15/25	ա. խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	27.08.2024 թ. ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀՇՁԲ 24/13

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ